ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ, ԵՂԲԱՅՐՆԵՐ

Բանալի խոսք.

(Գործ. 2:37-39)

Այս լսելով՝ ներկաները զղջացին իրենց սրտերում և ասացին Պետրոսին և միւս առաքեալներին. «Ինչ պետք է անենք, եղբայրներ»: Պետրոսը նրանց ասաց.

1. ***.«Ապաշխարեցէ՛ք, (μετανοέω, metanoeō - change of mind, մտքի փոփոխություն, փոխեցեք ձեր ընթացքը)***
2. ***և ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար,***
3. ***և պիտի ընդունէք Սուրբ Հոգու <u>պարգեւը</u> (մկրտությունը). որովհետև <u>խոստումը</u> ձեզ համար է, ձեր որդիների և բոլոր հեռաւորների համար, որոնց կը կանչի մեր Տէր Աստուածը»:***

41 <u>Ոմանք</u> յօժարութեամբ ընդունելով նրա խօսքը՝ մկրտուեցին. և այն օրը նրանք մօտ երեք հազար հոգով աւելացան:

Ի. ԱՌԱՋԻՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱ ՅՈԳՈՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴՆ Է:

1. *Հիսուսն ասաց, եթե մարդը վերստին չծնվի չի կարող տեսնել Աստծո արքայությունը (Հովհ. 3:3):*
2. *Եթե մարդը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող մտնել Աստծո թագավորությունը: (Հովհ. 3:5):*
3. *Մարմնից ծնվածը մարմին է, Հոգուց ծնվածը հոգի (Հովհ. 3:4,6):*
4. *Այդ Կիրակի օրը երեկոյան, երբ աշակերտները միասին հավաքվել էին և դռներն էլ փակել վախենալով Հրեա ղեկավարներից, Հիսուսը եկավ, կանգնեց նրանց մեջտեղը և ասաց նրանց. Խաղաղություն ձեզ: Եվ սա ասելով նրանց ցույց տվեց իր ձեռքերն ու կողը:* ***Աշակերտներն ուրախացան տեսնելով իրենց Տիրոջը: Հիսուս տարձյալ ասաց նրանց. Խաղաղություն ձեզ: Ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, Ես էլ ուղարկում եմ ձեզ: Ապա փչեց նրանց վրա և ասաց. Առեք Սուրբ Հոգին.***
5. *Սուրբ Հոգին մեզ մկրտեց քրիստոսի մարմնի մեջ: Նա մեզ դրեց Քրիստոսի ձեռքերի մեջ:*
    - *Աստված մեր Փրկիչը, իր քաղցրությունն ու մարդասիրությունը հայտնեց և փրկեց ոչ թե մեր կատարած արդար գործերի համար, այլ պարզապես իր ողորմած լինելու համար:* ***Նոր ծնունդ տվեց մեզ մկրտությամբ և Սուրբ Հոգու միջոցով վերանորոգեց մեզ (Տիտոս 3:3-4):***

- *Գաղ. 3:27 - Վասնզի ամենքդ՝ որ Քրիստոսում մկրտուեցաք, Քրիստոսին հագած էք:*

Օրինակ: երեխան մոր որովայնում ապրում է ջրի մեջ և սնունդ է առնում իր մորից ու ճանաչում է իր մոր ձայնը:

II. ՋՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՎԵՐԱԾՆՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Է:

*Մատ. 28:19-20 - Ուրեմն **գնացէք***

1. ***բոլոր ազգերը** աշակերտեցէք,*
2. *նորանց մկրտելով Հօր եւ Որդու եւ **Սուրբ Հոգու անունով**.*
3. *Նորանց սովորեցնելով, որ **ամեն ինչ** որ **ձեզ պատուիրեցի՝** պահեն. եւ ահա ես **<u>ձեզ հետ եմ</u>** (Սուրբ Հոգու միջոցով) ամեն օր մինչեւ աշխարհքի վերջը: Ամէն:*

Մար. 16:15-16 - Եւ նորանց ասաց. գնացեք ամբողջ աշխարհով մեկ և բոլոր մարդկանց քարոզեցե՛ք Ավետարանը (բարի լուրը): Ով որ հավատա և մկրտվի, կփրկվի, իսկ ով որ չհավատա կդատապարտվի (Հիսուսի կողքին խաչված ավազակը չմկրտվեց բայց հավատքով փրկվեց):

III. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԽՈՍՏՈՒՄԸ (ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ) ՔՐԻՍՏՈՍԻ ՈՒՍՄՈՒՆՔՆ Է:

- *Մար. 16:15-16 - Նրանք, ովքեր հավատում են, հայտնի կլինեն հետևյալ նշաններով.*
    1. *Իմ անունով չար ոգիներ պիտի հանեն,*
    2. *Նոր լեզուներով պիտի խոսեն,*
    3. *Ձեռքով օձ պիտի բռնեն առանց խայթվելու (Ծննդոց 3:14-15),*
    4. *Եվ եթե մահացու որև է թույն էլ խմեն, չպիտի վնասվեն,*
    5. *Հիվանդների վրա ձեռք պիտի դնեն և բժշկեն նրանց:*
- *Մար. 16:20 - Եվ նրանց քարոզչությունը հաստատվում էր իրենց տրված բոլոր նշաններու:*